ՍԵՎԱՆԱ ԿՂԶՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Ա. Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Սևանա կղզին միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային կենտրոններից է։ Նրա երկարատև մշակութային կյանքի խոսուն վկաներն են ինչպես մատենագրական աղբյուրներն ու այնտեղի գրչության կենտրոնի և Մատենադարանի ուսումնասիրության կարոտ ձեռագրերն ու նրանց հիշատակարանները, այնպես էլ կղզու ցայսօր կանգուն պատմաճարտարապետական հուշարձանները։

Հեթանոսության շրջանում և խորը միջնադարում կղզին հռչակված էր որպես «ծովապատ բերդ», ուներ «մեհյան... պարսպեալ ամուր պատուարաւ և գղեկօք, զտունն մեհենից...»[1]։ Կղզում քրիստոնեության ժամանակների առաջին շինությունը, ըստ ավանդության, կապվում է Գրիգոր Լուսավորչի անվան հետ։ 305 թ. նրա կողմից հեթանոսական մեհյանի տեղում կանգնեցվում է փայտե խաչ և կառուցվում ս. Հարության տաճարն ու ս. Կարապետ եկեղեցին[2]։

V դ., Մովսես Խորենացու վկայությամբ, Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության»՝ Մեսրոպ Մաշտոցի պատվերով կատարված հազվագյուտ թարգմանությունը պահվում էր Գեղարքունիքում[3]։ Նման ձեռագիր պահելու փաստը մասնագետներին հնարավորություն է տվել եզրակացնելու, որ Գեղարքունիքը Սևանա կղզին է, որտեղ եղել է հայ առաջին մատենադարաններից մեկը, ուր, որպես ապահով վայր, պահվել են արժեքավոր ձեռագրեր[4]։ Փաստորեն, Սևանի մատենադարանը հայոց ամենահին մատենադարանն է, որը գոյատևել է V—XX դդ.՝ շուրջ 1500 տարի։

Սևանի մատենադարանի նման «զինարան» ունեցող վանքը չէր կարող դպրոց, ինչպես նաև գրչության կենտրոն չունենալ։ Հիրավի, Սևանա կղզին նաև Հայաստանի հնագույն գրչության կենտրոններից է, որից, դժբախտաբար, քիչ բան է մեզ հասել. պատճառը ձեռագրերի ծովամույն լինելն է։ XVIII դ. Սիմեոն կաթողիկոսի՝ միաբանություն այցելելու կապակցությամբ, Սևանի առաջնորդ Հովհաննեսը, կաթողիկոսի բարկությունից վախենալով, բազմաթիվ վնասված ձեռագրեր թափում է լիճը[5]։

Շատ տևական է եղել նաև դպրոցական կյանքը։ IX դ. սկսվելով Մաշտոց Եղվարդեցու (898 թվից՝ կաթողիկոս) վարդապետարանի ստեղծումով, Սևանի դպրոցի պատմությունը ընդհատումներով շարունակվում է մինչև XVIII դ. վերջը, երբեմն հասնելով Մաշտոցի, Սարգիս Իմաստասեր-փիլիսոփայի ու Դանիել բաբունապետի վարդապետարանների մակարդակին, երբեմն թաղվելով անհայտության մեջ։

Ուշագրավ պատկեր է ներկայացնում Սևանա կղզու ճարտարապետական համալիրը, որտեղ ժամանակի ընթացքում կատարվել են հավելումներ, կառուցվել են տնտեսական և հոգևոր նշանակության շինություններ։ Դրանցից այժմ կանգուն են երկու եկեղեցի, որոնցից մեկի կառուցումը կապվում է Մաշտոց Եղվարդեցու և Աշոտ Բագրատունու դստեր (Սյունյաց Վասակ Գաբուռն իշխանի կնոջ)՝ Մարիամ իշխանուհու անունների հետ։ IX դ., Բագրա-

---

1 Մ. Կիրմուշխանեցի, Պատմութիւն անցից անցելոց Սեվանայ վանուց, Էջմիածին, 1871, էջ 8։

2 Նույն տեղում, էջ 9—10։

3 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 189։

4 Ե. Քասունի, Պատմութիւն հայ հին դաստիարակութեան, Բեյրութ, 1959, էջ 188։

5 Մ. Կիրմուշխանեցի, նշվ. աշխ., էջ 64։

տունյաց թագավորության տարիներին Սևանում էր ապրում և գործում հայ մշակույթի երախտավորներից մեկը՝ Մաշտոց Եղվարդեցին, որն էլ կազմել է «Մաշտոց» ծիսական ժողովածուն[6]։ Մաշտոցը՝ Գրիգոր քահանայի որդին, ծնվել է 832 կամ 833 թ., Սյունյաց Սողք գավառում[7]։ Սովորել է նախ Արագածոտն գավառի ս.Թեոդորոսի մենաստանում (Եղվարդ գյուղի մոտ), ապա՝ վարդապետ Ստեփանոսի մոտ՝ Մաքենոցաց վանքում։ Սյունյաց Դավիթ եպիսկոպոսի կողմից քահանա ձեռնադրվելուց հետո, որպես ճգնավոր, անապատական կյանքի է անցնում նախ Արտավազդի մենաստանում, ապա՝ Սևանա կղզում[8]։ Մաշտոց Եղվարդեցու շանքերով և Մարիամ իշխանուհու միջոցներով կառուցվում են կղզու մյուս երկու եկեղեցիները (ս. Առաքելոց և ս. Աստվածածնա), և հիմք է դրվում ս. Առաքելոց միաբանությանը[9]։

IX դ. վերջում Սևանա կղզում կային երեք եկեղեցիներ՝ ս. Կարապետ, ս. Առաքելոց, ս. Աստվածածնի։ XV դ. վերջում Սևանցի բարունապետ Դանիելը, իր ձեռագրի հիշատակարանում հանվանե թվարկում է վերը նշված հուշարձանները և ավելացնում մի նոր եկեղեցի՝ ս. Գրիգոր Լուսավորիչ անունով[10]։ Հետագայի ուսումնասիրողները հիշում են նաև ս. Սարգիս (ս. Մինաս) մատուռը[11]։ Հինգ եկեղեցիներից այժմ կանգուն են երկուսը։ Մինչև մեր դարի 30-ական թվականները Սևանա կղզու պատմության հարցերով զբաղվողները կանգուն եկեղեցիներից փոքրը իրավացիորեն անվանել են ս. Կարապետ, իսկ մեծը՝ ս. Առաքելոց։ Նրանք հիշում են մեկ այլ եկեղեցի ևս՝ ս. Աստվածածին, որը շինված է եղել բլրի ստորոտում, հարավ-արևմտյան կողմում[12]։

Հայ ճարտարապետության պատմաբանները իրավամբ կարծում են, որ այս հուշարձաններն իրենց ժամանակի համար կառուցողական ոչ բնորոշ առանձնահատկություններ ունեն։ IX—X դդ. հայ եկեղեցական ճարտարապետության համար առանձնակի նշանակություն է ստանում ավանդատների քանակական ավելացման երևույթը, իսկ այս եկեղեցիներից յուրաքանչյուրը հատակագծում ունի մեկ ավանդատուն և ազատ խաչի ու տարածականության լուծում։ Նրանցում, փաստորեն, կրկնվում են նախորդ դարերի կառուցողական հիմնական գծերը, որով այս շինությունները բացառություն են դիտվում այդ և հաջորդ դարերի համար[13]։

Ս. Կարապետի մի արձանագրության ընթերցումը պատճառ է դարձել, որ պատմաբանները և ճարտարապետության հետազոտողները շփոթեն դրանց անունները՝ փոքր եկեղեցին անվանեն ս. Առաքելոց, իսկ մեծը՝ ս. Աստվածածին։ Սևանա վանական համալիրի եկեղեցիների անունների մեջ պարզու-

---

6 Կ. Գանձակեցի, Հայոց Պատմություն, Երևան, 1982, էջ 68։ Այսպիսի մի «Մաշտոցում» պահվել է Եղվարդեցու աշակերտ Ստեփանոս գրչի շարադրած Հիշատակարան-վարքը, որ շատ կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն իր ուսուցչի ավելի քան 33 տարվա անապատական կյանքի և 22 տարվա առաջնորդության, այլև Սևանա կղզու մշակութային պատմության ուսումնասիրության համար (Տե՛ս Գ. Հովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 89—91)։

7 Գ. Հովսեփեան, նշվ. աշխ., էջ 92։

8 Նույն տեղում, էջ 90։ Հմմտ. Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 173։

9 Գ. Հովսեփեան, նշվ. աշխ., էջ 91, Ստ. Օրբելեան, էջ 173։

10 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 1301, էջ 237 ա։

11 Հ. Շահխաթունեանց. Ստորոգութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, էջմիածին, 1842, հ. 2, էջ 216, Ե. Լալաեան, Սևան («Ազգագրական հանդես», 1908, պր. 17, № 1, էջ 81)։

12 Մ. Կիմուշխանեցի, նշվ., աշխ., էջ 20, Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 214, Ե. Լալաեան, նշվ., աշխ., էջ 73։

13 Ստ. Մնացականյան, Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 27. Н. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 227.

թյուն մտցնելու համար դիմենք գրավոր սկզբնաղբյուրներին, ձեռագիր հիշատակարանների վկայություններին և նորահայտ արձանագրություններին։

Համալիրի փոքր եկեղեցին ս. Կարապետն է։ Ըստ ավանդության, այն, ինչպես նաև ս. Հարության տաճարը, կառուցել է Գրիգոր Լուսավորիչը. «Մերձ սուրբ Յարութեան տաճարին կառոյց և մատուռ մի անուանելով սուրբ Կարապետ, ի պատիւ Ամլորդւոյն և արքային Տրդատայ»[14]։

995 թ. մեծ երկրաշարժի ժամանակ ավերվում է ս. Հարության տաճարը։ Մ. Կյումուշխանեցու վկայությամբ, նրա օրոք (XIX դ. սկզբին—Ա. Ղ.) տաճարի «միայն գագաչափ որմունքն տեսանին, որք ունին գնչան հնագոյն շինուածոց»[15]։ Այս նույն երկրաշարժի ժամանակ կիսավեր է դառնում և ս. Կարապետ եկեղեցին, որը Գեղարքունիքի ժողովրդի միջոցներով վերականգնվում է միայն 1400 թ.[16]։ Ս. Կարապետը եռաբսիդ է՝ հարավ-արևելյան մեկ ավանդատնով (երկ.՝ 9 մ 36 սմ, լայն.՝ 7 մ 20 սմ, բարձ.՝ 10 մ)[17]։ Եկեղեցու թմբուկի արևելյան նիստի վրա պահպանվել է մի արձանագրություն, ուր հիշվում է ս. Առաքելոց եկեղեցու անունը. «շինեցի զեկեղեցիս յանուն սուրբ Առաքելոց...», որն առաջին անգամ նկատել և հրատարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը[18]։

Բացի այս արձանագրությունից նույն եկեղեցու հարավային և հարավ-արևելյան նիստերի վրա պահպանված է մի այլ արձանագրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

Թվ [Ռ]Ճ (1651 թ.) նորոգե(ց)աւ սբ Կարապ[ետս][19]։

Միևնույն եկեղեցու վրա սույն արձանագրությունների իրար հակասող անվանումները նկատելով, Լևոն Մելիքսեթ-Բեկը գրում է. «Թվացող հակասությունը դժվար չէ վերացնել, եթե ընդունենք, որ վերջին արձանագրության մեջ խոսքը ոչ թե տաճարի հիմնադրման մասին է, որ տեղի է ունեցել 874 թ., այլ 1651—1750 թվականների միջև տեղի ունեցած վերակառուցման մասին։ Այստեղից դժվար չէ ենթադրել, որ սկզբում նվիրված լինելով սբ. Առաքյալներին, տաճարը հետագայում «նորոգվում» է նվիրվելով արդե՛ն, ինչպես հաճախ լինում էր, նոր սրբի—սբ. Կարապետին»[20]։ Ավելի ուշ այս տեսակետն ընդունվել է հայ ճարտարապետության պատմությամբ զբաղվող մյուս մասնագետների կողմից։ Ստ. Մնացականյանը այդ առթիվ գրում է. «Մինչև վերջերս էլ մասնագիտական գրականության մեջ փոքր եկեղեցին անվանվում էր սբ. Կարապետի եկեղեցի, մինչդեռ ինչպես տեսնում ենք, այդպիսի անվանակոչման հետ բնավ չի կարելի համաձայնել»[21]։

Այս շփոթը պարզելու համար մենք նորից ուսումնասիրեցինք արձանագրությունը։ Այն գրված է հին, խառը գրությամբ, երկաթագիր, գրչագիր, բոլորագիր, անհասկանալիության աստիճանի համառոտագրված։ Խիստ հողմահարված է և ենթակա կորստյան (առաջին հրատարակությունից դուրս է մնացել արձանագրության օրհնանքը՝ Կատարիչքն ւսւրհնէ Աստուած).

КԱՄԱՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍՒՒՆԵԱՑ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՇԻՆԵՑԻ ՋԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

---

14 Մ. Կիւմուշխանեցի, նշվ. աշխ., էջ 9—10։

15 Նույն տեղում, էջ 31։

16 Մատենադարան, ձեռ. № 10655, էջ 56ա։

17 Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 73։

18 Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևանի անվան հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ [ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1940, № 4—5, էջ 117—118]։ Հմմտ. Ստ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 28։

19 Տե՛ս Л. Меликсет-Бек, Новооткрытая надпись на Севане, М.—Л., 1938, с. 413. Ե. Լալայանի վերծանությամբ՝ ՌՃԿԴ (1716) (նշվ. աշխ., էջ 73)։

20 Л. Меликсет-Бек, նշվ. աշխ., էջ 413։

21 Ս. Տ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 29, ծան. 2։

ԱՇՈՏ[ՈՅ] ԵՒ ՏՎԱՔ ՎԱՒՄ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՍ ՁՎԱՐՍԵՐ, ՁԳՈՄԱՁՈՐ, ՅԱՄԱՔԱԲԵՐԴ ԵՒ ԲԵՐԴ, ՈՒՌԵ
ԸՆ ՏԱՓ, ՈՐՍՆ, ԿՌԱԿԾՆԿԻՆ, ԱՅԳԻ Ի ԳԱՌՆԻ ԵՒ ՅԵՐԵՎԱՆ, ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ ՆՇԱՆ
Ք ԱՍՏՈՒԾԸՆԿԱԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՏԱՄ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԿՏԱԿԵԼՈՅ ԿՈՐԱՏԵՂ, ՈՎ ԽԱ
ՓԱՆԷ ՅԺԸ (318) ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՅԻ, ԹՎԻՆ ՅԻԳ (874), ԿԱՏԱՐԻՁՔՆ ԱԻՐՀՆԷ ԱՍՏՈՒԱԾ,

Այս նույն եկեղեցու հարավային մուտքին կից, կամարի արևելյան պատի ներսի կողմում, ներքևում կա 1613 թ. մի արձանագրություն՝ Կիրակոս աբեղայի կողմից եկեղեցուն մի դուռ նվիրելու մասին։ Այստեղ ստույգ նշվում է եկեղեցու անունը (հրատարակվում է առաջին անգամ).

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԿԻՐ
ԱԿՈՍ ԱԲԵՂԱՅԷՍ
ԿԱՆԽԵՍՅԻ ԴՈՒՌՍ
ՍԲ ԿԱՐԱՊԵՏԻՍ
ՈՎ ԿԱՐԴԱ ՈՂՈՐՄԻ
ԱՍԷ
ԹՎ ՌԿԲ (1613 թ.)

Ինչպես տեսնում ենք, այս եկեղեցին կոչվել է ս. Կարապետի անունով դեռ 1613 թ., այսինքն, մինչև վերոհիշյալ՝ 1651—1750 թթ. վերակառուցումները։ Ավելին, սույնը հաստատում է նաև հենց Սևանում գրված մի ձեռագրի հիշատակարան, ուր վերոհիշյալ եկեղեցին կոչվում է ս. Կարապետի անունով դեռևս 1451 թ., այսինքն, վերը նշված 1651 թ. վերանորոգումից երկու հարյուր տարի առաջ։ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1301 ձեռագիրը գրվել է «յերկիրս Գեղամայ ի Սեւան կղզի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Առաքելոցս, և սուրբ Կարապետիս և սուրբ Լուսաւորչիս, սուրբ նշանացս և սուրբ վարդապետաց շիրիմացս, ձեռամբ բազմամեղ և անարժան, տարտամ և անպիտան, փցուն և անյարմար գրչի Դանիէլի՝ անուամբ միայն աբեղայի, որ ձևով միայն է և ոչ գործով... ի խանութեանն Ջահանշահի որդւոյ Ուսուփի, ի թուականութեան Հայոց Ջ (1451 թ.)»[22]։

Այս հիշատակարանի գրիչ Դանիելը ծնունդով սևանցի է, սպասավորը ս. Կարապետի։ Սևանցի են նրա հայրը՝ Կարապետ քահանան, մայրը Համավորը և «ամենայն արեան մերձաւորքն»[23]։ Սա այն Դանիելն է, որի՝ Սևանա կղզում բացած վարդապետարանը XV դ. երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում գործող մեծ և փոքր վարդապետարաններից միակն էր, որ հիշվում է որպես «Արևելեան վարդապետարան»[24], իսկ նրա ռաբունապետը՝ «ռաբունապետ համայն ազգի»[25]։

Ս. Կարապետի վրա հանդիպող իբար հակասող այս արձանագրությունների թիվը անհամեմատ մեծ է։ Սույն եկեղեցու վրա, բացի նշված արձանագրություններից, կա երկու արձանագրություն ևս։ Կիրակոսի նվիրատվական արձանագրությունից վերև կարդում ենք (տպագրվում է առաջին անգամ).

ԵՍ ՍԱՐԳԻՍ ԾԱ
ՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՇԻՆ
ԵՑԻ ՁԵԿԵՂԵՑ
ԻՍ ՈՐ ԵՄ ՏԷՐ Ի ՍԱ

22 Մատենադարան, ձեռ. № 1301, էջ 237։ Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ 5։

23 Ն. Պոպոտիան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 9, Երուսաղեմ, 1979, էջ 544։

24 Մատենադարան, ձեռ. № 6125, էջ 327։

25 Մ. Կիւմուշխանեցի, նշվ. աշխ., էջ 43։ Հմմտ. Ա. Ղազարոսյան, Դանիել ռաբունապետը և Սևանի դպրոցը (Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 3, էջ 99—107)։

ՉԻՍ ՅԱՂԱՒԹՍ Յ
ԻՇԵՅԵՔ Ի ՅՇԲ (903 թ.)։

Արձանագրության մեջ հիշատակվող Սարգիսը, հավանաբար Մաշտոց Եղվարդեցու աշակերտն է, որն իր ուսուցչի կաթողիկոս դառնալուց հետո (898 թ.) ստանձնում է Սևանա վանքի առաջնորդությունը։ Այդ տարիներին էլ ավարտում է եկեղեցու շինարարությունը։ Անկասկած, ս. Կարապետի այս արձանագրությունը կղզու մեկ այլ եկեղեցու է վերաբերում, հավանաբար՝ այժմ ավերակ եկեղեցու շինարարությանը, որն, ինչպես գտնում են ուսումնասիրողները, ավելի ուշ ժամանակի է, քան կանգուն երկու եկեղեցիները։ Սա. Մնացականյանը այս եկեղեցին համարում է Սարգիս կաթողիկոսի (990—1019 թթ.) կառուցած[26], որովհետև 903 թ. արձանագրությունը նրան հայտնի չէր։ Ըստ հատակագծի, եկեղեցին ունի գմբեթավոր սրահներին բնորոշ լուծում և պատկանում է դրանց վաղ օրինակների թվին[27]։ Արձանագրության մեջ հիշվող եկեղեցին, թերևս, Դանիել բաբունապետի հիշատակարանում թվարկվող չորս եկեղեցիներից ս. Գրիգոր Լուսավորիչն է[28]։ Բացի այս արձանագրությունից, ս. Կարապետի վրա կա նաև Ծաղկաձորի ժողովրդի՝ ս. Առաքելոցին արած նվիրատվության մասին արձանագրությունը[29]։

Ինչպես տեսնում ենք, ս. Կարապետի վրա պահպանվել է մեկ այլ եկեղեցու՝ Դանիել բաբունապետի հիշատակարանում նշված ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը վերաբերող արձանագրություն։ Ուրեմն ս. Կարապետ եկեղեցու վրա եղած արձանագրությունները պատկանում են ոչ միայն այդ եկեղեցուն, այլև ամբողջ միաբանության կառույցներին։ Այս տեսանկյունից պետք է վերանայել և Մելիքսեթ-Բեկի հրապարակած արձանագրությունը։ Այն վերաբերում է ոչ թե ս. Կարապետ եկեղեցուն (որի վրա արձանագրված է), այլ նորակերտ ս. Առաքելոցին։ Եվ որ 874 թ. ոչ թե Առաքելոց եկեղեցու կառուցման տարեթիվն է, այլ Աշոտ իշխանի և նրա դստեր՝ այդ եկեղեցուն արած նվիրատվության տարեթիվը՝ գրված եկեղեցիներից ամենահնի վրա։ Որ այս նվիրատվությունը արվել է եկեղեցու շինությունից հետո, վկայում է Ստեփանոս գրիչը՝ Մաշտոցի վարքագիրը։

Խոսելով իր ուսուցչի և Մարիամ իշխանուհու կողմից եկեղեցիների շինարարության մասին, գրիչը մանրամասն շարադրում է դրանից հետո եղած դեպքերը. «Եւ ելեալ ընդ աւուրսն ընդ այնոսիկ իշխանն Հայոց Աշոտ ի կողմանս Վրաց, վասն ապստամբելոց ոմանց յելուզակաց, առ եղերբն գետոյն հզաւրի. որ կոչի Կուր։

Դարձեալ խաղաղութեամբ ընդ այն ...որ կոչի բանակետեղ. հայցէր... զերանելին Մաշթոց... Ապա շնորհէր երանելի հաւրն Մաշդոցի զլոյսն մշտընջենաւոր, զոր արձակեալ էր նմա արքային Յունաց Վասլի։ ...առեալ յինքն զսուրբ խաչն, զոր պնդեալ էր ոսկւով և զարդարեալ գեղեցկազան գործով, ընդելուզեալ մարգարտով...»[30]։ Այս խաչը արձանագրության մեջ հիշվող աստուածընկալ սուրբ Նշանն է, որ կղզում պահվել է մինչև 1908 թ.[31]։

Այս նվիրատվության մասին վկայում է նաև Ստ. Օրբելյանը, ամբողջապես բերելով արձանագրության մեջ եղած հիշատակությունները, մեկ առ մեկ նշելով ս. Առաքելոց միաբանությանը նվիրված գյուղերի անունները. «...յորմէ համբաւոյ միաբանեալ Աշոտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ հօրն. և ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին, և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն գեղոյ զՎարսերն, զՅամաքաբերդ. զԳոմաձորն, զԲերդքն, Ուռեաց տափ և զորսն կոակծին և այգիս ի

---

26 Ստ. Տրոնացի, Պատմութիւն տիեզերական, ս. Պետերբուրգ, 1885, էջ 258—259, Ղ. Ալիշան, Սիսական. Վենետիկ, 1893, էջ 82։

27 Սա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 37, 97։

28 Մատենադարան, ձեռ. № 1301, էջ 237։

29 Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 87։

30 Գ. Հովսեփեան. նշվ. աշխ., էջ 91։

31 Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 75։

Գառնի և Երևան. յայլ տեղիս...»։ Օրբելյանը նույնիսկ իր միտքը ավարտում է այնպես, ինչպես արձանագրության մեջ «...և բազում նզովիւք հաստատեցին»[32]։

Ս. Կարապետի նվիրատվական արձանագրությունների մեծ մասը (բացառությամբ Կիրակոսի և 1651 թ. նորոգման արձանագրությունների) այդ եկեղեցուն չեն վերաբերում։ Ուրեմն կղզու ս. Առաքելոց միաբանության երեք եկեղեցիներից մեկը և հնագույնը՝ այժմ կանգուն, փոքր եկեղեցին է՝ ս. Կարապետը։

Իսկ որ Սևանի միաբանությունը ս. Առաքելոց անունն է կրել, վկայում է Եղվարդեցու նույն աշակերտ Ստեփանոսը, գրելով որ իր ուսուցիչը «...բնակեալ էր ի Վանսս յայս ամս մետասան, որք են անուամբ սրբոց Առաքելոց եկեղեցի Գ (3)»[33]։ Նույն վկայությունն ունենք նաև այս հիշատակարանի համառոտ խմբագրության մեջ «...որք են անուամբ սրբոց Առաքելոցն եկեղեցի երեք»[34]։ Երբ Աշոտ իշխանը 874 թ. նվիրատվություն էր անում ս. Առաքելոց միաբանությանը, այդ ժամանակ Մաշտոցն արդեն տասը տարի հոգևոր կյանք էր վարում կղզում։ Ուրեմն Մաշտոցի անապատական կյանքը Սևանում սկսվել է 864 թ.։

Հետաքրքիր է Ստեփանոսի Հիշատակարան-վարքի վերջը, ուր գրիչը ամփոփում է իր ուսուցչի շուրջ 60-ամյա գործունեությունը. «Եւ յայսմ ամի (893 թ.—Ա. Ղ.) յորում կարգեցի զ(ս)ակաւաւոր դրումնս, էր ամի կենաց նորա սակաւ ինչքան զվաթսուն ամ, իսկ որ մեկնեալ էր ի կերակրոց ի բոլոր իսկ հեշտութեանց մարմնոյ ԼԳ (33) ամք, և ի շինութեան տեղւոջս ԻԲ (22)»[35]։ Նույնը կա և հիշատակարանի համառոտ տարբերակում[36]։ Այսպես, 893 թ. արդեն 22 տարի գոյություն ունեին ս. Առաքելոց միաբանության երեք եկեղեցիները՝ ս. Կարապետը, ս. Առաքելոցը, ս. Աստվածածինը, և, վերջին երկուսի շինարարությունը ավարտվել է 893—22—871 թ.։

Այս փաստը ևս հաստատում է մեր այն միտքը, որ Մելիքսեթ-Բեկի հրատարակած արձանագրությունը սոսկ նվիրատվական բնույթի է և եկեղեցու շինարարության վավերագիրը չէ, ինչպես ընդունում են արդի ուսումնասիրողները։ Արձանագրությունը գրվել է հին եկեղեցու վրա, ս. Առաքելոցի շինարարությունից երեք տարի հետո կատարված նվիրատվության առթիվ, Աշոտի և նրա դստեր՝ Մարիամի կողմից։ Վերջիններս հոգացել են ոչ միայն եկեղեցիների շինարարության, այլև միաբանության գոյության միջոցները, ինչպես միջնադարում արվել են այլ միաբանությունների համար։

Սևանա կղզու ճարտարապետական համալիրի հաջորդ կանգուն եկեղեցին ս. Առաքելոցն է, որը գտնվում է ս. Կարապետից 10 մ հեռավորության վրա։ Ըստ հատակագծի, այն կրկնում է ս. Կարապետի կառուցման հիմնական կողմերը (երկ.՝ 13 մ, լայն.՝ 10 մ, 80 սմ, բարձր.՝ 16 մ)[37] և կառուցվել է նրա իսկ նմանությամբ։

Ստ. Օրբելյանի երկում պահպանվել է մի գողտրիկ պատմություն կապված ս. Առաքելոց և ս. Աստվածածին եկեղեցիների կառուցման հետ. «Եւ յետ բազում ճգանց (Մաշտոց Եղվարդեցին—Ա. Ղ.) հրաման առնու ի տեսլեան շինել եկեղեցի յանուն երկոտասան առաքելոցս, և սահմանել միաբանակեացս. յաղագս որոյ և գային առ նա երկոտասանքն ի վերայ ծովուն յանուրջս և նշանէին զտեղն եկեղեցւոյն»[38]։ Նույնպիսի տեսիլք է երևում և Մարիամ Բագրատունուն՝ «գայ առ սուրբն Մաշտոց. բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն

---

32 Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 174։
33 Գ. Հովսեփեան, նշվ. աշխ., էջ 91։
34 Նույն տեղում, էջ 95։
35 Նույն տեղում, էջ 92։
36 Նույն տեղում, էջ 95։
37 Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 72։
38 Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 173։

յանուն սուրբ առաքելոց, զմիւսն, յանուն տիրուհւոյ Աստուածածնին և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեացդ արանց յ323 թուականի հայոց (874)»[39]։

XV դ. երկրորդ կեսին, ավելի ստույգ՝ 1486 թ., Դանիել բարունապետի պատվերով նրա աշակերտներ Աբրահամ Սևանցին և Գրիգորիսը պատրաստում են այս եկեղեցու համար մի գեղեցիկ դուռ։ Ավարտելով դուռը, Աբրահամ Սևանցին մի ձոներդ է թողնում դռան վրա՝ նվիրված իր ուսուցչին, որը մի խոսուն փաստ է եկեղեցու անվան բացահայտման օգտին.

Զ Հա[յոց] թուականի
Լե թիւ ավելի (1486 թ.),
Յաթոռակալութեան տեառն Սարգսի,
Ի խանութեան Յաղուբ բեկի,
Ծաղկեցաւ դուռն տաճարիս
Առաքելոցն Քրիստոսի
Հրամանաւ սուրբ վարդապետի
Եռայմեծիս Դանիէլի...[40]։

Ուրեմն մեծ եկեղեցին իսկապես կառուցվել է ս. Առաքյալների անունով։ Մեծ եկեղեցու վրա չկա անունը և թվականը հաստատող արձանագրություն, այլ միայն եկեղեցու (արձանագրության մեջ չի նշվում անունը) ուղղորդման մասին արձանագրություն՝ հարավային ավանդատան վրա։ Այն 1654 թ. թիֆլիսցի Սուլխան, Զալ և Զոհրապ եղբայրների կողմից է թողնված, արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը ու քանիցս հրատարակվել[41]։ Ս. Առաքելոց եկեղեցու հյուսիս-արևմտյան պատին կա մի սենյակ, որը իրավացիորեն համարվում է ուշ ժամանակներում կառուցված, ունեցել է գավիթ, որը կանգուն է եղել մինչև XIX դ. 30-ական թվականները։ Գավթի բաղկացուցիչ մասն են կազմել փայտյա սյուների երկու խոյակները, որոնք, ենթադրվում է, նախապես զարդարել են վանահոր պալատական շենքը կամ կաթողիկոսներից որևէ մեկի ամառանոցային նստավայրը[42]։ IX—X դդ. թվագրվող այս խոյակները խիստ հետաքրքիր են և դարձել են հատուկ ուսումնասիրության առարկա[43]։

Հիմք ընդունելով Ստ. Օրբելյանի վկայությունը Մաշտոց վարդապետի և Մարիամ իշխանուհու կողմից կղզում ս. Աստվածածնա ու ս. Առաքելոց եկեղեցիների կառուցման մասին, միաժամանակ, ս. Կարապետի վրա եղած 874 թ. արձանագրությունը՝ ս. Առաքելոցի անվան հիշատակությամբ, ուսումնասիրողները կանգուն հուշարձանները համարել են ս. Առաքելոց և ս. Աստվածածնի։ Մինչդեռ XIX դ., ինչպես նաև XX դ. սկզբում Սևանա կղզու պատմության ուսումնասիրողները միաձայն վկայում են, որ ս. Աստվածածինը կառուցված է եղել բլրի ստորոտում, ս. Առաքելոցից հյուսիս-արևմուտք, և տալիս են որոշ մանրամասներ. «Զկնի շինութեան այսր տաճարի յանուն Առաքելոցն երկոտասանի տայ կառուցանել նոյն տիկինն Մարիամ զերկրորդ եկեղեցի ի լայնեալ ստորոտի անդ. արևմտեան հիւսիսոյ յանուն Մարիամայ մօր։ Տեառն ի կուիածոյ խարտեալ քարանց՝ որ ունի զմի սեղան պատարագի, զերկուս ավանդատունս , երկու դրունս և է օրորոցաձև առանց կաթողիկէի, մեծ դռութեամբ քան զմիւսն, չունի և սա թուական կամ անձնագիր նոյն

39 Նույն տեղում, էջ 173—174։

40 Գ. Հովսեփեան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Երևան, 1964, հ. Ա, էջ 202։

41 Մ. Կիմուշխանեցի, նշվ. աշխ., էջ 107—109։ Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 80։

42 Ստ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 39։

43 Т. Измайлова, Севанские капители (Труды отдела истории культуры и искусства Востока, т. 3, 1940). Հմմտ. Ստ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 37։

առաջի շինութեան, այլ նորոգութեան միայն դարձեալ ի նոյն արանց երից եղբարցն Տփխիսեցւոց»[44]։

Ս. Աստվածածին եկեղեցու վերջին ականատես ուսումնասիրողի՝ Ե. Լալայանի վկայությամբ այն շինված է եղել սրբատաշ քարից, բաղկացած է եղել ժամատնից, նորակառույց զանգակատնից և փայտաշեն գավթից. «Ժամատունը օրորոցաձև է անգմբեթ, 10 մ 40 սմ երկարության, 10 մ լայնության և 9 մ բարձրության։ Դրսից ճարտարապետական ոչ մի ուշագրավ բան չկա։ Ներսից երկու հասարակ, ամբողջական և վեց որմնասյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ և նույնպիսի կամարակապ ձեղուն։ Ունի մի սեղան և երկու ավանդատուն։ Հինգ փոքրիկ և նեղ պատուհաններ աղոտ լույս են սփռում։ Սեղանը զարդարված է գեղեցիկ խաչկալով ս. Աստուածածնի պատկերով, որ Ալեքսանդրապոլի «Ծոթ վերք» կոչված պատկերի ընդօրինակությունն է»[45]։

Ուսումնասիրողները վկայում են նաև, որ ս. Աստվածածին եկեղեցուն կից եղել է ս. Սարգսի կամ ս. Մինասի մատուռ[46]։ Այս շինության հիմնադրման տարեթիվը և ժամանակաշրջանը անհայտ են, և հետազոտողների վկայությամբ այն ավելի վաղ ժամանակի է եղել քան ս. Աստվածածին եկեղեցին։ Ինչպես տեսնում ենք, նրանք վկայում են, որ այս եկեղեցին ու մատուռը կառուցված են եղել բլրի ստորոտին։ Ինչպես մյուս եկեղեցիները, ս. Աստվածածնի եկեղեցին ևս չի ունեցել անուն վավերացնող և ժամանակը հաստատող արձանագրություններ։ Բացի այդ, ուսումնասիրողներին ենք պարտական, որ մասնակի պատկերացում ենք ստանում ոչ միայն եկեղեցու ձևի, այլև նրա վրա եղած արձանագրությունների մասին[47]։

Այսպիսով, հաստատվում է Ատեփանոս գրչի վկայությունը. Մաշտոց Եղվարդեցու գործունեության ժամանակ՝ IX դ., Սևանում ստեղծվում է Առաքելոց միաբանություն՝ երեք եկեղեցիներով։ Ս. Կարապետի 874 թ. նվիրատվական բնույթի արձանագրությունը հաստատում է, որ Սյունյաց Մարիամ տիկինը կառուցել է ս. Առաքելոց եկեղեցին։ Ստ. Օրբելյանն իր Պատմության մեջ արձանագրում է Մարիամ իշխանուհու կողմից կղզում երկու եկեղեցիների կառուցման փաստը։ Դանիել րաբունապետը 1451 թ. գրած հիշատակարանում մեկ առ մեկ հիշում է ճարտարապետական համալիրի մեջ մտնող եկեղեցիները՝ ս. Աստվածածին, ս. Առաքելոց, ս. Կարապետ և ս. Լուսավորիչ։ Անցյալ դարի ուսումնասիրողները հիշում են նաև ս. Սարդիս կամ ս. Մինաս մատուռը՝ ս. Աստվածածնի մոտ։

Դանիելի հիշած եկեղեցիներից առաջին երկուսը Սյունյաց տիկնոջ միջոցներով են շինված, իսկ երրորդը՝ ս. Կարապետը, կառուցվել է ս. Առաքելոցից և ս. Աստվածածնից առաջ, ուր մինչև հիշյալ եկեղեցիների կառուցումը սպասավորել է Մաշտոց Եղվարդեցին, եկեղեցի, որի որմին տեղեկություն է արձանագրվել նորակերտ եկեղեցու շինարարության և նրան արված նվիրատվության մասին նույն բնույթի է նաև Ծաղկաձորի ժողովրդի կողմից գրված անթվակիր արձանագրությունը)։ Հնագույն կանգուն եկեղեցու վրա նորակառույցների մասին հիշատակելու ավանդույթի արտահայտություն է նաև Սարդիս վարդապետի 903 թ. արձանագրությունը։

Այսպիսով՝ 1651—1750 թթ. ընթացքում վերակառուցումների ժամանակ Սևանա կղզու եկեղեցիներից ոչ մեկի անունը չի փոխվել, դրանք այդպես են կոչվել հիմնադրման ժամանակից՝ ս. Կարապետ, ս. Առաքելոց, ս. Աստվածածին ու ս. Գրիգոր Լուսավորիչ, իսկ մատուռը՝ ս. Սարդիս կամ ս. Մինաս։

---

44 Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 216։ Տե՛ս նաև Մ. Կիմուշխանեցի, նշվ. աշխ., էջ 20, Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 81։

45 Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 74։

46 Մատենադարան, ձեռ. № 10655, էջ 57ա, Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 216։

47 Ե. Լալաեան, նշվ. աշխ., էջ 81։

Ս. Կարապետ և ս. Առաքելոց եկեղեցիներից բացի, մյուսները ավերվել են (ս. Գրիգոր Լուսավորչի միայն որմերն են պահպանվել)[48]։

ЦЕРКВИ НА СЕВАНСКОМ ОСТРОВЕ

А. А. КАЗАРОСЯН

Резюме

На протяжении веков на Севанском острове был построен ряд церквей, из которых уцелели лишь две. Самая древняя из них—церковь св. Карапета. Усилиями вардапета Маштоца и на средства княгини Мариам Багратуни рядом с ней в 871 г. была возведена подобного же типа церковь св. Аракелоц (Апостолов), а на северо-западном склоне холма—церковь св. Аствацацин (Богородицы).

Надпись 874 г., оставленная княгиней Мариам Багратуни на барабане малой церкви, с восточной стороны, является вовсе не строительной надписью этой церкви, а дарственной, выбитой на самой древней церкви монастырского комплекса. На стенах церкви сохранились надписи подобного и строительного характера, относящиеся к другим векам (903 г., 1613 г.). Малая из уцелевших церквей не является церковью св. Аракелоц. Это церковь св. Карапета, на которой сохранились еще две надписи с указанием названия, а упоминание об этих церквях в литературных источниках восходит к глубокому средневековью (1451 г.). Вторая из сохранившихся церквей является церковью св. Аракелоц.

CHURCHES ON THE ISLAND ON THE LAKE SEVAN

A. H. KAZAROSIAN

Summary

Constructed in the course of centuries on the island on the lake Sevan a number of churches were built. The earliest one is the church of St. Karapet. Through the efforts of Vardapet Mashtots and the material support given by princess Mariam Bagratuni, another church of similar type was erected in 871 close by the church of St. Arakelots (Apostles), while constructed on the North-Wastern slope of the hill was still another church of St. Astvatsatsin (the Holy Virgin).

The inscription of 874 left by the princess Mariam Bagratuni on the drum of the minor church on the eastern side of ihe church carries a presentation inscription. The walls of the structure have retained similar incriptions as well as the ones related to construction works carried out in later times (903, 1613). The smaller of the surviving churches is the church of St. Karapet still retaining two inscriptions specifying the names, the mentions of these churches in literary sources dating back to the deep Middle Ages (1451). The -second of the sourviving churches is the church of St. Artakelots.

48 Ս. Աստվածածնի և նրան կից մատուռի լուսանկարը կարելի է տեսնել Գ. Ալիշանի «Սիսական»-ում և Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում», ուր Աստվածածնի եկեղեցին մեզ է ներկայանում XVII—XIX դդ. հատուկ վերափոխումներով (Գ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 82։ Ե. Լալաեան, նշվ. աշխ., նկ. 10)։